

Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2022)17 հանձնարարականն անդամ պետություններին՝ միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների իրավունքների պաշտպանության վերաբերյալ.

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2022 թվականի մայիսի 20-ին, Նախարարների տեղակալների 132-րդ նիստում)

Նախաբան

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի «բ» կետի համաձայն (ETS No. 1)՝

Նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել իր անդամների միջև ավելի մեծ միասնության, ի թիվս այլոց, հետամուտ լինելով ընդհանուր չափանիշներին և մարդու իրավունքների ոլորտում համագործակցության ընդլայնմանը.

Հաստատելով, որ գենդերային հավասարությունն առանցքային է մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության և լավ կառավարման, օրենքի գերակայության և կայուն զարգացման և բոլորի բարեկեցության ապահովման համար.

Հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի գենդերային հավասարության 2018-2023 թվականների ռազմավարությունը և դրա ռազմավարական նպատակը՝ պաշտպանել միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների իրավունքները.

Գործելով Եվրոպայում միգրացիայի և ապաստանի համատեքստում խոցելի անձանց պաշտպանության Եվրոպայի խորհրդի գործողությունների ծրագրին (2021-2025 թթ.) և, մասնավորապես՝ միգրացիայի և ապաստանի ընթացակարգերի շրջանակներում խոցելիությունների բացահայտման նպատակին համահունչ,

Նկատի ունենալով պետությունների կողմից Եվրոպայի խորհրդի համապատասխան կոնվենցիաների համաձայն ստանձնած պարտավորությունները և պարտականությունները, այդ թվում՝

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (ETS No. 5, 1950 թ.) և դրա արձանագրությունները՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան դատական պրակտիկայի լույսի ներքո.
- Եվրոպական սոցիալական խարտիան (ETS No. 35, 1961 թ., վերանայված 1996 թ., ETS No. 163).
- Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիան (ETS No. 126, 1987 թ.).
- Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (CETS No. 197, 2005 թ.).

- Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (CETS No. 201, 2007).
- Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան (CETS No. 210, «Ստամբուլի կոնվենցիա», 2011 թ.). և
- Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (CETS No. 216, 2015 թ.).

Հիշեցնելով Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին Նախարարների կոմիտեի հետևյալ հանձնարարականները՝

- Rec(2002)5 հանձնարարականը՝ բռնությունից կանանց պաշտպանության մասին.
- CM/Rec(2010)10 հանձնարարականը՝ հակամարտությունների կանխարգելման և լուծման և խաղաղության կառուցման գործում կանանց և տղամարդկանց դերի մասին.
- CM/Rec(2012)12 հանձնարարականը՝ օտարերկրյա բնակարանայինների մասին.
- CM/Rec(2015)1 հանձնարարականը՝ միջմշակութային ինտեգրման մասին.
- CM/Rec(2019)1 հանձնարարական՝ սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին.
- CM/Rec(2019)4 հանձնարարական՝ երիտասարդ փախստականներին չափահաս տարիքի անցումային փուլում աջակցելու մասին. և
- CM/Rec(2019)1
- 1 հանձնարարական՝ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ ինամակալության մասին:

Հիշեցնելով խորհրդարանական վեհաժողովի, Տեղական և տարածքային մարմինների կոնգրեսի և Եվրոպայի խորհրդի Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների (ՄՀԿ) համաժողովի համապատասխան բանաձևերն ու հանձնարարականները.

Հիշեցնելով՝

- 1967 թ. արձանագրությամբ փոփոխված Միավորված ազգերի կազմակերպության՝ փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան (1951 թ.).
- Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 189 կոնվենցիան (2011 թ.).
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան («ԿՆԽՎԿ», 1979 թ.) և դրա կամընտիր արձանագրությունը (1999 թ.), ինչպես նաև այս հանձնարարականին հատուկ վերաբերող համապատասխան ԿՆԽՎԿ Ընդհանուր հանձնարարականները.
- Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (1989 թ.) և դրա կամընտիր արձանագրությունները (2000, 2011 թթ.).
- Միավորված ազգերի կազմակերպության Հաշմանդամությունն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան (2006 թ.).
- Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 1325 բանաձևը կանանց և խաղաղության և անվտանգության մասին (2000 թ.).
- Միավորված ազգերի կազմակերպության փախստականների մասին գլոբալ պայմանագրի (2018 թ.) և ՄԱԿ-ի Անվտանգ, կազմակերպված և կանոնավոր միգրացիայի մասին գլոբալ համաձայնագրի (2018 թ.) համապատասխան դրույթները. և
- ՄԱԿ-ի շրջանակներում միգրացիայի հետ կապված այլ համապատասխան փաստաթղթերը.

Հաշվի առնելով Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի 2002 թվականի մայիսի 7-ի «Միջազգային պաշտպանության թիվ 1 ուղեցույցները՝ Գենդերային հիմքով հետապնդումները՝ 1951 թվականի կոնվենցիայի 1Ա (2) հոդվածի և/ կամ փախստականների կարգավիճակին վերաբերող նրա 1967 թվականի արձանագրության համատեքստում».

Նկատի ունենալով ՄԱԿ-ի 2030 Կայուն զարգացման օրակարգի ընդհանուր կիրառման և ազդեցության

կարևորությունը, մասնավորապես Կայուն զարգացման նպատակ 5-ը («Չասել գեղեցիկի հավասարության և իրավագործել բոլոր կանանց և աղջիկներին»), Կայուն զարգացման նպատակ 10-ը («Կրճատել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև»), իր թիրախ 10.7-ով՝ «նպաստել մարդկանց կանոնավոր, անվտանգ, կազմակերպված և պատասխանատու միգրացիային և տեղաշարժին, ներառյալ՝ պլանավորված և լավ կառավարվող միգրացիոն քաղաքականության իրականացման միջոցով», և Կայուն զարգացման նպատակ 16-ը («Խթանել խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը՝ հանուն կայուն զարգացման, բոլորի համար հասանելի դարձնել արդարությունը, բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, հաշվետու և ներառական հաստատություններ»).

Վերահաստատելով, որ մարդու բոլոր իրավունքները և հիմնարար ազատությունները համընդհանուր են, անբաժանելի, փոխադարձ կախում ունեցող և փոխկապակցված, և որ անհրաժեշտ է երաշխավորել միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների կողմից դրանց լիարժեք կիրառումը՝ առանց որևէ հիմքով խտրականության.

Արժևորելով դրական ներդրումը, որ միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանայք և աղջիկները կարող են բերել եվրոպական հասարակություններին և համայնքներին.

Չաշվի առնելով միգրացիոն գործընթացների խորքային փոփոխությունները և դրա հետևանքով անդամ պետությունների մարտահրավերները.

Չատուկ նշելով միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների իրավիճակի էվոլյուցիան, այն փաստը, որ նրանց թիվը 2010-ականներին հասել է ռեկորդային մակարդակի և գեղեցիկի հավասարության, միգրացիայի և ապաստանի հետ կապված հայեցակարգերի, քաղաքականության և իրավական գործիքների նշանակալի զարգացումները բոլոր մակարդակներում.

Արձանագրելով, որ կանանց և տղամարդկանց միգրացիոն փորձը տարբեր է, և ընդունելով, որ թեև մարդու իրավունքների առկա միջազգային չափանիշները կիրառվում են պետությունների իրավասության ներքո գտնվող բոլոր անձանց համար, այնուհանդերձ, անհրաժեշտ են լրացուցիչ ջանքեր՝ գնահատելու միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների վերաբերյալ գործող օրենքների և քաղաքականության անբավարար իրականացման, իրազեկման և մշտադիտարկման հետևանքով առաջացող կանխարգելման և պաշտպանության բացերը.

Ընդգծելով, որ կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը շարունակական է և իրականացվում է, քանի որ նրանք կին են, որ այն անհամաչափորեն է ազդում նրանց վրա, և որ այդ առումով բռնությունը գեղեցիկի հիմքով է, խորը մտահոգությամբ ընդունելով, որ միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանայք և աղջիկներն ավելի մեծ հավանականությամբ կարող են ենթարկվել բռնության, թրաֆիքինգի, շահագործման և վատ վերաբերմունքի՝ իրենց ծագման երկրներում, ճանապարհորդության ընթացքում և տարանցման և/կամ նպատակակետ երկրներում, և արձանագրելով, որ դա իրենց մարդու իրավունքների լուրջ խախտում է, հատկապես, քանի որ նրանք բախվում են դժվարությունների և կառուցվածքային խոչընդոտների՝ պայքարելու նման բռնության, թրաֆիքինգի, տարբեր ձևերով շահագործման և իրենց նկատմամբ վատ վերաբերմունքի դեմ.

Մտահոգությամբ նշելով, որ միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանայք և աղջիկները կարող են բախվել խտրականության և հալածանքի բազմաթիվ և ինտերսեկցիոնալ ձևերի՝ իրենց ծագման երկրում, ճանապարհորդության ընթացքում և/կամ նպատակակետ երկրում, և ընդգծելով ներառական և փոխադարձ մոտեցման անհրաժեշտությունը, որը հաշվի կառնի միգրանտների, փախստականների և ապաստան հայցող կանանց և աղջիկների տարբեր իրավիճակներն ու անհատական հատկանիշները.

Տեղյակ լինելով միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների բազմաթիվ և ինտերսեկցիոնալ խոչընդոտների մասին՝ նրանց իրավագործացման, իրավունքների հասանելիության և իրականացման առումով.

Յիշեցնելով ընդունող երկրի տնտեսական, սոցիալական, քաղաքացիական, քաղաքական և մշակութային կյանքում միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղքիկների ինտեգրման և մասնակցության կարևորությունը,

1. Միգրանտ կանանց վերաբերյալ անդամ պետություններին ուղղված Rec(79)10 հանձնարարականի տեքստը փոխարինում է սույն հանձնարարականով.
2. Հանձնարարում է անդամ պետությունների կառավարություններին՝
 - i. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները սույն հանձնարարականում և դրա հավելվածում շարադրված սկզբունքները տարածելու և կիրառելու համար, ապահովելով, որ միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանայք և աղքիկները կարողանան արդյունավետորեն օգտվել իրենց իրավունքներից.
 - ii. ապահովել, որ այս հանձնարարականը թարգմանվի համապատասխան երկրների պաշտոնական լեզուներով և լայնորեն տարածվի (հասանելի ձևաչափերով) համապատասխան մարմինների և շահագրգիռ կողմերի միջև, որոնց առաջարկվում է միջոցներ ձեռնարկել դրա իրականացման համար.
 - iii. պարբերաբար ուսումնասիրել Եվրոպայի խորհրդի իրավասու ղեկավար կոմիտե(ներ) ի և մարմինների շրջանակներում ձեռնարկված միջոցառումները և այս ոլորտում ձեռք բերված առաջընթացը:

CM/Rec(2022)17 հանձնարարականի հավելված

I. Շրջանակը

1. Սույն հանձնարարականը ներառում է միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղքիկներին:
2. Սույն հանձնարարականը հաշվի է առնում «միգրանտ» եզրույթի միջազգայնորեն համաձայնեցված սահմանման բացակայությունը.
3. Սույն հանձնարարականի նպատակների համար «փախստական» եզրույթը ներառում է նրանց, ովքեր փախստական են ճանաչվել 1967 թվականի Արձանագրությամբ փոփոխված «Փախստականների կարգավիճակի մասին» Ժնևի կոնվենցիայի համաձայն (այսուհետ՝ 1951 թ. կոնվենցիա), ինչպես նաև նրանց, ովքեր ներկայումս օգտվում են միջազգային կամ եվրոպական մարդասիրական, օժանդակ կամ ժամանակավոր պաշտպանության ցանկացած այլընտրանքային ձևից: «Ապաստան հայցող կանայք և աղքիկներ» եզրույթը ներառում է նրանց, ովքեր դիմել են նման պաշտպանության համար:

II. Հորիզոնական խնդիրներ

4. Սույն հավելվածում ներկայացված բոլոր միջոցառումներն իրականացնելիս անդամ պետությունները պետք է հաշվի առնեն ստորև նշված հորիզոնական խնդիրները:

Խտրականության բացառում, ինտերսեկցիոնալ խնդիրներ և կարծրատիպերի վերացում

5. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանայք և աղքիկները որևէ հիմքով չենթարկվեն խտրականության:

6. Անդամ պետությունները սույն հավելվածում նշված բոլոր միջոցառումներում պետք է կիրառեն ինտերսեկցիոնալ մոտեցում՝ հատկապես նկատի ունենալով միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների տարբեր իրավիճակներն ու անհատական բնութագրերը:
7. Անդամ պետություններին առաջարկվում է միջոցներ ձեռնարկել՝ բարելավել առանց փաստաթղթերի միգրանտ կանանց և աղջիկների՝ իրենց հիմնարար իրավունքներից օգտվելու հնարավորությունները, իսկ կանանց նկատմամբ բռնության կամ թրաֆիքինգի տուժողների համար՝ հանցագործությունների մասին հաղորդելու հնարավորությունները՝ չվախենալով վտարվելուց:
8. Ե՛վ միգրանտների, և՛ ընդունող երկրների և համայնքների ներսում անդամ պետությունները պետք է՝
 - 8.1 հատուկ ուշադրություն դարձնեն միջոցառումներին, որոնք ուղղված են միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների իրավունքների վրա բացասաբար ազդող բոլոր տեսակի կարծրատիպերի վերացմանը.
 - 8.2 երկխոսությունը խթանելու համար իրականացնեն գեներային հավասարության և մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկման և կրթական միջոցառումներ:

Աղջիկներ

9. Անդամ պետությունները պետք է միգրանտ, փախստական և ապաստան հայցող աղջիկների նկատմամբ որդեգրեն երեխաների իրավունքների վրա հիմնված մոտեցում, որը հաշվի կառնի աղջիկների տարիքը, նրանց հատուկ խոցելի իրավիճակներն ու կարիքները:
10. Երեխաների պաշտպանության միջոցառումները պետք է իրականացվեն առանց խտրականության՝ ելնելով միգրացիոն կարգավիճակից:
11. Անդամ պետությունները պետք է իրենց քաղաքականության մեջ ինտեգրեն գեներային նկատառումները, ուղեցույցներ մշակեն առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների վերաբերյալ և իրականացնեն կարողությունների զարգացման միջոցառումներ՝ ըստ յուրաքանչյուր ազգային մարմնի շրջանակի և մանդատի՝ նպատակ ունենալով.
 - 1.1. կատարելագործել նույնականացման ընթացակարգերը, ներառյալ՝ անհրաժեշտության դեպքում, տարիքի գնահատումը, միջազգային չափանիշներին համապատասխան.
 - 1.2. ապահովել երեխայի լավագույն շահի նկատմամբ լիարժեք հարգանք՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աղջկա հատուկ իրավիճակը, անկախ նրանից՝ նա տեսանելիորեն առանց ուղեկցության է, ճանապարհորդում է այլ ընտանիքի հետ, թե ամուսնացած է:
 - 1.3. ապահովել, որ ընդունելության համակարգերը համապատասխանեն առանց ուղեկցության և ընտանիքից անջատված աղջիկների սեռին և տարիքին, և ներառեն համապատասխան և անվտանգ այլընտրանքային խնամքի միջոցներ:
12. Առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներին պետք է անհապաղ հատկացվի անկախ և համապատասխանորեն պատրաստված խնամակալ:
13. Անդամ պետությունները պետք է ջանքեր գործադրեն միգրանտ, փախստական և ապաստան հայցող աղջիկների համար անհրաժեշտ ծառայությունների շարունակական հասանելիությունն ապահովելու համար՝ աջակցելու նրանց 18 տարեկանից հետո մեծահասակ կյանքի անցմանը:

Տեղեկատվություն, իրավագործում, մարդու իրավունքների խթանում և իրազեկվածության բարձրացում

14. Միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկներին իրավագործելու և իրենց համար մարդու իրավունքներից օգտվելը հնարավոր դարձնելու համար նրանց հասկանալի ձևով և լեզվով պետք է տրամադրվի համապատասխան և մատչելի տեղեկություն և խորհրդատվություն, որը ներառում է առնվազն.
- 14.1 մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայում և այլ համապատասխան փաստաթղթերում ամրագրված իրենց մարդու հիմնարար իրավունքները, ներառյալ՝ այն ժամանակ, երբ կանայք և աղջիկները գտնվում են կալանավայրերում և ընդունման կենտրոններում.
 - 14.2 հաղորդում կամ գանգատ ներկայացնելու ցանկացած մեխանիզմ՝ պետության կամ պետության անունից գործող մասնավոր գործակալությունների կողմից բռնության կամ իրավունքների այլ խախտումների դեպքում, ներառյալ՝ քաղաքացիական պաշտպանության, փոխհատուցման և իրավական օգնության իրավունքները.
 - 14.3 կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի, ներառյալ՝ թրաֆիքինգի դեմ ցանկացած պաշտպանության և աջակցության ծառայությունները, որոնք հասանելի են ընդունող երկրում.
 - 14.4 ընդունող երկրում ցանկացած հասանելի և մատչելի հանրային ծառայությունները, մասնավորապես՝ առողջապահությունը, ներառյալ հոգեկան առողջությունը, սեռական և վերարտադրողական առողջությունը և իրավունքները¹, տարիքին համապատասխան և համապարփակ սեռական կրթությունը, հոգեբանական աջակցությունը, կրթությունը, լեզուների և թվային տեխնոլոգիաների ուսուցումը, մասնագիտական ուսուցումը, ինտեգրման ծրագրերը, կացարանը և զբաղվածությունը:
15. Անդամ պետություններին առաջարկվում է տրամադրել ռեսուրսներ և գործիքներ միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների իրավագործման և աջակցության համար՝ ելնելով նրանց կարիքներից և անհատական հատկանիշներից:
16. Անդամ պետություններին առաջարկվում է նպաստել միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների համար թվային ծառայությունների և կապերի մատչելիությանը, այդ թվում՝ ինտերնետի հասանելիությունը, մասնավորապես, եթե ծառայություններն ու տեղեկատվությունը հասանելի են բացառապես կամ մեծ մասամբ թվային ձևաչափով:

Արդարադատության մատչելիություն

17. Միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանայք և աղջիկները պետք է ունենան ազգային և միջազգային քաղաքացիական, վարչական և քրեական պաշտպանության միջոցներ՝ իրենց իրավունքներն արդյունավետորեն իրացնելու և/կամ այդ իրավունքների խախտման դեպքում համապատասխան քայլերի դիմելու համար՝ համաձայն համապատասխան ազգային և միջազգային չափանիշների և կառուցակարգերի:
18. Կանանց նկատմամբ բռնության ցանկացած ձևի և թրաֆիքինգի ենթարկված միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկներին աջակցելու նպատակով հավուր պատշաճի պետք է տրամադրվի ներպետական օրենսդրությամբ նախատեսված պայմաններով իրավաբանական խորհրդատվություն և անվճար իրավաբանական օգնություն՝ քրեական, վարչական և քաղաքացիական վարույթների հարուցման, այդ թվում՝ իրավախախտների դեմ

1 «Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունքներ (ՍՎԱԻ)» Պեկինի գործողությունների հարթակի և Բնակչության և զարգացման միջազգային համաժողովի (ԲԶՄԳ) գործողությունների ծրագրի համատեքստում և դրանց վերանայման համաժողովների արդյունքները: Սա վերաբերում է նաև 68-րդ կետին:

փոխհատուցման հայցերի և իրավական պաշտպանության միջոցով:

19. Գանգատի ներկայացման նախնական փուլում, արդարադատության ողջ ընթացքում և փոխհատուցում հայցելիս, ինչպես նաև ապաստանի որոշման ընթացակարգերի համատեքստում պաշտպանություն փնտրող միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկներին, աջակցելու համար ներպետական օրենսդրությամբ նախատեսված պայմաններով պետք է հասանելի լինեն թարգմանիչները, ներառյալ՝ ժեստերի լեզվի թարգմանիչները, իրավաբանները և միջնակուսային միջնորդները՝ բոլորը մասնագետ և գերադասելի է, որ լինեն կանայք:
20. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ քաղաքացիական, վարչական կամ քրեական դատավարության ընթացքում որպես հայցվոր, մեղադրյալ կամ վկա հանդես եկող միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանայք և աղջիկները աջակցություն ստանան այն նույն պայմաններով, ինչ այդ երկրի քաղաքացիները:
21. Քաղաքացիական, վարչական և քրեական վարույթներում միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների անհատական իրավիճակն ու կարիքները որոշելիս նրանց նկատմամբ պետք է որդեգրվի ինտերսեկցիոնալ և գենդերազգային մոտեցում, հատկապես, երբ որոշումներն ազդում են նրանց իրավական կարգավիճակի վրա:

Արհեստական բանականություն, ավտոմատացված որոշումների կայացում և տվյալների պաշտպանություն

22. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ մինչև միգրացիայի ոլորտում արհեստական բանականության և որոշումների կայացման ավտոմատացված համակարգերի ներդրումն իրականացվի մարդու իրավունքների վրա դրանց ազդեցության գնահատում գենդերային հավասարության տեսանկյունից:
23. Պետական կամ մասնավոր հատվածների կամ ծառայություններ մատուցողների և կապալառուների կողմից արհեստական բանականության և ավտոմատացված որոշումների կայացման համակարգերի ցանկացած նախագծում, մշակում և կիրառում չպետք է լինի խտրական, համապատասխանի գաղտնիության սկզբունքներին, լինի թափանցիկ և ունենա հստակ կառավարման մեխանիզմներ, հետևյալ հմատեքստում՝
 - 23.1 սահմանապահության և ներգաղթի վերահսկողության վերաբերյալ որոշումների կայացում, ներառյալ՝ մուտքի կամ վերադարձի հետ կապված որոշումները.
 - 23.2 միգրացիայի կառավարում, ներառյալ կենսաչափական տեղեկատվության օգտագործումը.
 - 23.3 միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների հետ ոստիկանության աշխատանք և նրանց անվտանգության ապահովում.
 - 23.4 միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկներին ծառայությունների մատուցում:
24. Միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց հարցերով զբաղվող քաղաքացիական հասարակության համապատասխան կազմակերպությունները պետք է ներգրավվեն նրանց առնչվող նոր տեխնոլոգիաների մշակման և կիրառման քննարկումներում:
25. Տվյալների պաշտպանության հետ կապված և նկատի ունենալով միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների խոցելիության առանձնահատուկ իրավիճակները, համապատասխան մարմինները պետք է.
 - 25.1 ներպետական օրենսդրությանը և կիրառելի միջազգային պարտավորություններին

համահունչ ապահովեն համապատասխան անձնական տվյալների անձեռնմխելիությունը, անվտանգությունը և ընդհանուր առմամբ պաշտպանությունը.

- 25.2 չփոխանցեն որևէ այդպիսի տվյալ ծագման երկիր՝ առանց վավեր իրավական հիմքի և առանց ազդակիր անձին բացատրելու նրան հասկանալի լեզվով, թե որ տվյալներն են փոխանցվում, ինչ նպատակով և ինչ պայմաններով, այդ թվում՝ անձին հնարավորություն տալով օգտվել իր իրավունքներից, մասնավորապես՝ մուտք գործելու, առարկելու, իրավական պաշտպանության միջոցներ փնտրելու կամ վերահսկիչ մարմնից օգնություն խնդրելու, եթե օրինական բացառություն չի կիրառվում:

Համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ

- 26. Անդամ պետությունները պետք է համագործակցեն և աջակցեն միգրանտ և փախստական կանանց կազմակերպություններին, կանանց իրավունքների և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպություններին, որոնք սատարում են միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղքիկների համընդհանուր մարդու իրավունքներին, պաշտպանում և իրավազորում են նրանց:
- 27. Միգրացիայի, ապաստանի և ինտեգրման քաղաքականություն մշակելիս պետք է խորհրդակցել միգրանտ և փախստական կանանց կազմակերպությունների հետ, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում ռոմաների և ճամփորդների² կանանց կազմակերպությունների:

Տվյալների հավաքագրում, հետազոտություն և մշտադիտարկում

- 28. Անդամ պետությունները պետք է աջակցեն միգրացիայի, փախստականների և ապաստանի, մասնավորապես՝ կանանց նկատմամբ բռնության, ներառյալ՝ թրաֆիքինգի տուժողների վերաբերյալ տվյալների հավաքագրմանը, առնվազն, ըստ տարիքի և սեռի տարաբաժանված, և ապահովեն տվյալների պաշտպանության կիրառելի պահանջներին համապատասխանությունը:
- 29. Գեոդերային հավասարության տեսանկյունից միգրացիայի, ինտեգրման և ապաստանի քաղաքականության հետազոտությունները, մշտադիտարկումը և գնահատումը, հատկապես՝ կանանց և աղքիկների հիմնարար իրավունքների ցանկացած խախտում կանխելու հետ կապված, պետք է աջակցություն և համապատասխան նյութական ռեսուրսներ ստանան բոլոր մակարդակներում:
- 30. Հավաքագրված տվյալները և նման հետազոտության և գնահատման արդյունքները պետք է օգտագործվեն բոլոր մակարդակներում՝ այս ոլորտներում պետական քաղաքականության հետագա մշակման և ճշգրտման համար:

III. Պաշտպանություն և աջակցություն

- 31. Անդամ պետությունները պետք է պաշտպանեն միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղքիկներին կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերից, ներառյալ՝ թրաֆիքինգից:
- 32. Միջոցներ պետք է ձեռնարկվեն միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղքիկներին ատելության խոսքից և սեքսիզմից պաշտպանելու համար:
- 33. Անդամ պետությունները պետք է մշակեն հատուկ միջոցներ միգրանտ, փախստական և

2 «Ռոմաներ և ճամփորդներ» հասկացությունն օգտագործվում է Եվրոպայի խորհրդում ներառելու այս ոլորտում Եվրոպայի խորհրդի աշխատանքում ներառված խմբերի լայն բազմազանությունը. մի կողմից՝ ա) ռոմա, միևնույն/մանուշ, կալե կապե, ռոմանիչալս, բոյաշ/ռուզարի, բ) Բավկանյան եգիպտացիներ (եգիպտացիներ և աշքալիներ), գ) արևելյան խմբեր (դոմ, լոմ և աբդալ), և, մյուս կողմից, այնպիսի խմբեր, ինչպիսիք են ճամփորդները, յեմիշները և «Gens du voyage» վարչական եզրույթի ներքո նշված բնակչությունը, ինչպես նաև այն անձինք, ովքեր իրենց գնչու են ճանաչում: Սա բացատրական ծանոթագրություն է, այլ ոչ թե գնչուների և/կամ ճանապարհորդների սահմանում:

ապաստան հայցող կանանց և աղջիկների սեռական շահագործման, այդ թվում՝ նման շահագործման պահանջարկի դեմ պայքարելու համար, ներառյալ՝ պաշտպանական, պատժիչ, կանխարգելիչ և դաստիարակչական միջոցները: Անդամ պետությունները պետք է նաև միջոցներ ձեռնարկեն մշտադիտարկման և իրազեկվածության բարձրացման ուղղությամբ, որպեսզի հնարավորություն ընձեռվի հայտնաբերել տուժողներին և համապատասխան աջակցություն և վերականգնում ապահովել:

34. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ մշակույթը, սովորույթը, կրոնը, ավանդույթը կամ, այսպես կոչված, «պատիվը» չհամարվեն որպես կանանց և աղջիկների նկատմամբ որևէ շահագործման կամ բռնության արդարացում:
35. Անդամ պետությունները պետք է ապահովեն միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների համար՝ երեխաների հետ կամ առանց երեխաների, կանանց նկատմամբ բռնության, ներառյալ՝ թրաֆիքինգից տուժողների համար ապաստարանների արդյունավետ հասանելիություն՝ անկախ նրանց իրավական կարգավիճակից:
36. Կանանց նկատմամբ բռնությունից, ներառյալ՝ թրաֆիքինգի տուժողների, այդ թվում՝ նրանց, ովքեր տեղավորվում են տարանցման ընդունման և տեղավորման կենտրոններում և կացարաններում, պետք է տրամադրվեն ընդհանուր և մասնագիտացված աջակցության ծառայություններ: Դա ներառում է առնվազն կարճաժամկետ և երկարաժամկետ հոգեբանական աջակցություն և առողջապահություն, ներառյալ՝ հոգեկան առողջության խնամքը, վնասվածքների խնամքը, սեռական և վերարտադրողական առողջության խնամքը, անհապաղ բժշկական աջակցությունը, բռնաբարության և սեռական բռնության դեպքերում դատաբժշկական ապացույցների հավաքումը, ինչպես նաև խորհրդատվությունը:
37. Անդամ պետությունները պետք է թույլ տան միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկներին օգտվել բնակչությանը հասանելի փոխհատուցման ծրագրերից, միջոցառումներից կամ ներպետական օրենսդրության համաձայն այլ ծրագրերից, որոնք ուղղված են կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ թրաֆիքինգից տուժողների ինտեգրմանը կամ վերաինտեգրմանը:
38. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների նկատմամբ տույժեր չկիրառվեն, այդ թվում՝ որպես թրաֆիքինգի տուժող նրանց շահագործման պատճառով օրինական միգրացիայից կամ փախստականի կարգավիճակից զրկելը:
39. Միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների, ներառյալ՝ միգրանտ և փախստական կանանց կազմակերպությունները, պաշտպանության և աջակցության հարցերում պետք է որդեգրվի երկրորդական զոհականացումը նվազեցնող և իրավագործող միջգերատեսչական, զոհակենտրոն մոտեցում:
40. Կանանց նկատմամբ բռնության, թրաֆիքինգի, գենդերային հավասարության և միջմշակութային խնդիրների վերաբերյալ ուսուցումը և իրազեկվածության բարձրացումը պետք է համարժեքորեն ֆինանսավորվեն և տրամադրվեն բոլոր համապատասխան մարմիններին և նրանց աշխատակազմին, որպեսզի նրանց հնարավորություն ընձեռվի.
 - 40.1 անհապաղ բացահայտել տուժողներին, հնարավորության դեպքում՝ համագործակցելով համապատասխան աջակցող կազմակերպությունների հետ, իրականացնել ռիսկերի գնահատումներ, տեղեկացնել տուժողներին իրենց իրավունքների մասին, ուղղորդել նրանց համապատասխան մարմիններին և պաշտպանություն, բուժում և խնամք տրամադրել միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկներին, ովքեր ենթարկվել են բռնության որևէ ձևի, ներառյալ՝ թրաֆիքինգի.
 - 40.2 կանանց նկատմամբ բռնության և թրաֆիքինգի դեպքերի բացահայտման ժամանակ տեղյակ լինեն դժվարությունների մասին, որոնց կարող են բախվել միգրանտ,

փախստական և ապաստան հայցող կանայք և աղջիկները՝ իրենց անապահով իրավական կարգավիճակի, որակյալ թարգմանչական ծառայությունների անհասանելիության, իրենց իրավունքների մասին գիտելիքների պակասի պատճառով, և հաշվի առնեն միգրացիայի/ապաստանի վերաբերյալ որոշումների, սոցիալական պարսավանքի, աղքատության հետ կապված նրանց նկատմամբ բռնության դրսևորումների և աջակցության բացակայության գործոնները:

41. Բոլոր համապատասխան պետական և մասնավոր հաստատություններում պետք է գործեն հեշտ հասանելի մեխանիզմներ, որպեսզի հնարավորություն ընձեռվի անձնակազմին և անձնակազմի կողմից հաղորդել կանանց նկատմամբ բռնության դեպքերի, ներառյալ՝ թրաֆիքինգի միջադեպերի մասին: Հաղորդումներին նպաստելու համար անդամ պետությունները պետք է ապահովեն անձի տարիքը հաշվի առնող և գենդերազգայուն հեռախոսային օգնության գծերի հասանելիությունը, այլ համապատասխան գործակալություններ, բժշկական և հոգեբանական բուժման ուղղորդման ընթացակարգեր:
42. Պետք է իրականացնել միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների նկատմամբ բռնության անհատական ռիսկերի գնահատում և ռիսկերի կառավարում՝ հաշվի առնելով նրանց խոցելիությունը, հատկապես՝ նրանց անապահով իրավական կարգավիճակով պայմանավորված:

Արտակարգ իրավիճակ և ճգնաժամային կառավարում

43. Հանրային առողջության, մարդասիրական և կլիմայի փոփոխության հետ կապված ճգնաժամային իրավիճակներում անդամ պետությունները պետք է հաշվի առնեն գենդերային հիմքով բռնության, այդ թվում՝ թրաֆիքինգի ռիսկը, միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների աղքատությունն ու անօթևանությունը, և, հետևաբար, պետք է.

- 43.1 Հաշվի առնեն միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների իրավիճակն ու կարիքները ճգնաժամային կառավարման և վերականգնման միջոցառումներում, այդ թվում՝ իրավունքների պաշտպանության, մասնավորապես՝ առողջության, կացարանի, սննդի անվտանգության, ջրի, տնտեսական գորացման և արդարադատության մատչելիության, ինչպես նաև բռնության ենթարկված կանանց՝ աջակցության մասնագիտացված ծառայություններից օգուվելու իրավունքները՝ դրանք որակելով որպես հիմնական ծառայություններ և երաշխավորելով դրանց շարունակական հասանելիությունը:
- 43.2 Ապահովեն, որ ճգնաժամի և դրան հաջորդող ցանկացած արտակարգ դրության ժամանակ ձեռնարկված միջոցները համապատասխանեն միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների մարդու իրավունքներին առնչվող միջազգային պարտավորություններին:
- 43.3 Ապահովեն նման իրավիճակներում միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ խորհրդակցությունը:

IV. Ժամանում

Նախաժամանման տեղեկատվություն

44. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ներգաղթի ընթացակարգերը հաշվի առնեն կանանց և աղջիկների հատուկ իրավիճակները, առանձնահատկությունները, կարիքները և խոցելիությունը և լինեն անձի տարիքը հաշվի առնող և գենդերազգային:
45. Անդամ պետությունները պետք է մատչելի տեղեկություն տրամադրեն իրենց տարածքում օրինական մուտքի և գտնվելու պայմանների մասին:

Տարանցման և ընդունման կենտրոններ

46. Իրավասու մարմինները պետք է ապահովեն, որ տարանցման, ընդունման, կացարանի և դիտազննման (սքրինինգի) միջոցառումները լինեն անձի տարիքը հաշվի առնող և գենդերազգայուն: Սքրինինգի գործընթացը, մասնավորապես, պետք է նպաստի կանանց նկատմամբ բռնության, ներառյալ՝ թրաֆիքինգի տուժողների հնարավորինս արագ նույնականացմանը և երաշխավորի, որ կանանց պաշտպանության հայցերն արագ և արդյունավետ ընթացք ստանան: Դա պետք է արվի անվտանգ, գաղտնի և զոհակենտրոն եղանակով: Կանանց նկատմամբ բռնության, ներառյալ՝ թրաֆիքինգի տուժողներին, սույն հավելվածի 36-րդ կետին համահունչ, պետք է տրամադրվեն աջակցության ծառայություններ:
47. Ընդունման և տեղավորման կենտրոնները պետք է տեղակայվեն այնպիսի վայրերում, որտեղ կանայք և աղջիկներն ապահով են և կարող են օգտվել առողջապահական համապատասխան ծառայություններից և տեղեկատվությունից, այդ թվում՝ սեռական և վերարտադրողական առողջության, սոցիալական և իրավական օգնության, կրթության և առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի օբյեկտներում:
48. Կացության վայրի և հասանելի ծառայությունների մասին որոշում կայացնելիս պետք է հաշվի առնվեն կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերից, ներառյալ՝ թրաֆիքինգի տուժողների կոնկրետ կարիքները և անվտանգության նկատառումները, ինչպես նաև բոլոր այլ համապատասխան հատուկ կարիքները, մասնավորապես՝ հղիության, հաշմանդամության կամ առողջական վիճակի հետ կապված: Կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ թրաֆիքինգի տուժողները պետք է տեղավորվեն մասնագիտացված կենտրոններում:
49. Այդ կենտրոններում պետք է ապահովվի մարդու իրավունքների, գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության հարցերով վերապատրաստված անձնակազմի, գերադասելիորեն՝ կանանց ներկայությունը, այդ թվում՝ իրավաբանների, սոցիալական աշխատողների, միջմշակութային միջնորդների, թարգմանիչների, ոստիկանների և պահակների:
50. Տարանցման և ընդունման կենտրոններում գտնվող կանանց և աղջիկներին պետք է առաջարկվեն համապատասխան և ապահով բնակելի տարածքներ: Երեխա ունեցող կամ առանց երեխաների (մինչև 18 տարեկան) միայնակ կանանց պետք է տրամադրվեն առանձին, անվտանգ քնելու և սանիտարահիգիենիկ տարածքներ, ինչպես նաև այլ անվտանգ տարածքներ: Մյուս հարմարանքները որոնք պետք է ապահովվեն, ներառում են բնական և արհեստական լույսի հասանելիություն, բավարար օդափոխություն և ջեռուցում, մաքուր մահճակալ և անկողնային պարագաներ, մաքուր, ազատ մուտք դեպի մաքուր, լավ լուսավորված լոգարան և զուգարան, ինչպես նաև հիմնական սանիտարահիգիենիկ պարագաների անվճար և կանոնավոր առկայություն: Անհրաժեշտության դեպքում պետք է ապահովվի նորածինների հիմնական սնունդը և հագուստը:
51. Տարանցման և ընդունման կենտրոններում գտնվող կանայք և աղջիկները պետք է հնարավորություն ունենան օգտվելու բռնության կամ իրավունքների այլ խախտումների վերաբերյալ գանգատների/հաղորդման համակարգից, որի միջոցով գանգատները քննվում են և, ըստ անհրաժեշտության, ուղարկվում են ոստիկանություն, ապահովելով, անհրաժեշտության դեպքում, իրավաբանական օգնություն:
52. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ տարանցման, ընդունման և կացարանի հարմարությունները և ծառայությունները ենթարկվեն կանոնավոր անկախ մշտադիտարկման, ընդ որում, երբ այդպիսի ծառայությունները մատուցվում են մասնավոր կապալառուների կողմից ապահովվեն համապատասխանությունը սույն հավելվածով սահմանված պաշտպանության չափանիշներին:
53. Ամեն անգամ, երբ միգրանտ, փախստական կամ ապաստան հայցող կանայք և աղջիկները գրկվում են ազատությունից տարանցման, ընդունման կամ տեղավորման կենտրոններում,

անդամ պետությունները պետք է նաև ապահովեն սույն հավելվածի պարբերություններում կալանավայրերում գտնվելուն վերաբերող դրույթների պահպանումը:

Ապաստան

54. Անդամ պետությունները պետք է ընդունեն և կիրառեն անձի տարիքը հաշվի առնող և ապաստանին վերաբերող գենդերազգայուն չափանիշներ, գործելակերպ և ընթացակարգեր:
55. Կանայք և աղջիկները պետք է իրավունք ունենան օգտվելու ապաստանի և պաշտպանության մասին տեղեկություններից և ընթացակարգերից՝ սահմաններին և անդամ պետությունների տարածքում հատուկ վայրերում:
56. Պետք է ապահովվի կանանց և աղջիկների՝ իրենց ամուսնուց, ներպետական օրենսդրությամբ ճանաչված զուգընկերոջից կամ ծնողներից անկախ ապաստանի հայց ներկայացնելու հնարավորություն, և նրանք պետք է տեղեկացված լինեն այդ իրավունքի մասին:
57. Անդամ պետությունները պետք է ապահովեն 1951 թվականի Կոնվենցիայի գենդերազգայուն մեկնաբանություն, հատկապես՝ կապված ապաստան տրամադրելու հիմքերի և գենդերային բռնության, ներառյալ՝ կանանց և աղջիկների թրաֆիքինգի, որպես 1951 թվականի Կոնվենցիայի 1Ա հոդվածի 2-րդ կետի իմաստով քրեական հետապնդման հնարավոր ձևի ճանաչման հետ:
58. Անդամ պետությունները պետք է ջանքեր գործադրեն ապաստանի գործընթացի բոլոր փուլերում գենդերային առումով համապարփակ ուղեցույցներ մշակելու համար, այդ թվում՝ ընդունման և աջակցության ծառայությունների, սքրինինգի, արագացված կամ կասեցնող ընթացակարգերի նպատակով «անվտանգ» երկրների որոշման, կալանքի, կարգավիճակի որոշման, դատավճռի կայացման և վերադարձի վերաբերյալ, ինչպես նաև նման ուղեցույցների մասով/ուղղությամբ վերապատրաստեն ամբողջ համապատասխան անձնակազմին:
59. Ապաստարանների կին ծառայողները և թարգմանիչները պետք է հասանելի լինեն ապաստան հայցողների համար: Վերջիններս պետք է տեղեկացված լինեն այդ հնարավորության առկայության մասին:
60. Երեխաների բացակայության դեպքում, միևնույն ընտանիքի կանանց և տղամարդկանց համար պետք է, ըստ պահանջի, հնարավոր լինեն առանձին հարցազրույցներ: Կանայք պետք է տեղեկացված լինեն այս հնարավորության մասին, և գաղտնիությունը պետք է երաշխավորվի: Նույն սկզբունքը պետք է կիրառվի անչափահաս ամուսնացած աղջիկների դեպքում:
61. Ապաստանի հայցերը քննարկելիս և որոշելիս պետք է հաշվի առնել.
 - 61.1 դիմումատուի անձնական հանգամանքները և ռիսկի անհատական գնահատումը.
 - 61.2 ծագման երկրի մասին համապատասխան տեղեկատվություն, այդ թվում՝ գենդերային հավասարության և կանանց իրավունքների հետ կապված: Դա կարող է ներառել արդարադատության համակարգի և իրավական դաշտի մատչելիությունը և արդարադատության իրականացումը, հասանելի սոցիալական, տնտեսական և այլ աջակցությունը, ինչպես նաև կանանց և աղջիկների նկատմամբ հավանական բազմակի և ինտերսեկցիոնալ խտրականության և/կամ հայրիշխանական վերաբերմունքի մասին տեղեկությունները:
62. Եթե կնոջ կամ աղջկա փախստականի կարգավիճակի վերաբերյալ որոշումը բացասական է, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ նրանք ունենան լրացուցիչ կամ օժանդակ պաշտպանություն խնդրելու արդյունավետ հնարավորություն:

Միջսահմանային միջոցառումներ

63. Անդամ պետություններին առաջարկվում է մասնակցել վերաբնակեցման ծրագրերին, տրամադրել ընդունման լրացուցիչ հնարավորություններ և զարգացնել օրինական ուղիներ՝ ապահովելու կանանց և աղջիկների անվտանգ տարանցումը:
64. Անդամ պետություններին առաջարկվում է ֆինանսավորել հատուկ օգնության և մարդասիրական վերաբնակեցման ծրագրեր կանանց և կատամամբ բռնության կամ թրաֆիքինգի, ներառյալ՝ սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգի տուժող հանդիսացող կամ ռիսկի տակ գտնվող կանանց և աղջիկների համար:
65. Անդամ պետություններին առաջարկվում է ստեղծել և իրականացնել արդյունավետ միջսահմանային պաշտպանության մեխանիզմներ կանանց և կատամամբ բռնության և մարդկանց թրաֆիքինգի, ներառյալ՝ սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգի տուժողների համար:

V. Կացություն և ինտեգրում Առողջապահական ծառայություններ

66. Իշխանությունները պետք է ապահովեն, որ առողջապահական ծառայությունները հաշվի առնեն միգրանտ կանանց և աղջիկների իրավիճակն ու անհատական բնութագիրը, լինեն անձի տարիքը հաշվի առնող և գենդերազգային:
67. Բոլոր միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկներին պետք է տրամադրվեն հիմնական առողջապահական ծառայությունները, ներառյալ՝ առաջնային բուժօժանդությունները, շտապ և անհապաղ բուժօգնությունը, պալիատիվ խնամքը, ինչպես նաև հանրային առողջության նկատառումներով անհրաժեշտ բուժումը կամ օգնությունը:
68. Անդամ պետություններն իրենց երկրի տարածքում օրինականորեն ներկա գտնվող միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների համար պետք է ապահովեն որակյալ, անձի տարիքը հաշվի առնող և գենդերազգային առողջապահական ծառայությունների արդյունավետ հասանելիություն: Դա պետք է ներառի, մասնավորապես, հոգեկան առողջության, սեռական և վերարտադրողական առողջության ծառայություններն ու իրավունքները, հղիության ընթացքում և դրանից հետո առողջապահական ծառայությունները և կանանց նկատմամբ բռնության դեպքում նախատեսված ծառայությունները: Անդամ պետությունները պետք է նաև ձգտեն նման ծառայություններ մատուցել անկանոն իրավիճակում գտնվող միգրանտ կանանց և աղջիկներին:
69. Հիմնական առողջապահական խնամքի հասանելիությունը սկզբունքորեն չպետք է կախված լինի կնոջից բացի ներգաղթի հարցերով զբաղվող մարմնի կամ որևէ այլ անձի թույլտվությունից: Անչափահաս աղջիկների բժշկական խնամքը կարող է իրականացվել ծնողի կամ անկախ խնամակալի համաձայնության պայմանով՝ մշտապես հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը:
70. Հաշվի առնելով լեզվական, տնտեսական և մշակութային խոչընդոտները կամ հաշմանդամությունը՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ կանայք նախնական, ազատ և տեղեկացված համաձայնություն տան ցանկացած բժշկական միջամտության, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով այլ բան է նախատեսված:

Սոցիալական ծառայություններ, սոցիալական ապահովություն և կացարան

71. Կանանց և աղջիկների անվտանգությանն ու բարեկեցությանը վերաբերող ցանկացած որոշումներում, այդ թվում՝ սոցիալական ծառայությունների և սոցիալական ապահովության հետ կապված որոշումներում, առաջին հերթին հաշվի պետք է առնվեն նրանց կարիքները:

72. Անդամ պետություններին առաջարկվում է ապահովել, որ միգրացիոն կարգավիճակը հիմք չհանդիսանա երկրի տարածքում օրինականորեն ներկա գտնվող միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց կացարանի և սոցիալական աջակցության ծրագրերի հասանելիության հարցում խտրականության համար:

Ինտեգրում և մասնակցություն

73. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրենց երկրի տարածքում ծնված ցանկացած երեխա ծնվելուց անմիջապես հետո ունենա գրանցվելու իրավունք և նրան քաղաքացիություն ստանալու ուղղորդում տրվի:
74. Քաղաքացիական իրավունքների հասանելիության և քաղաքական որոշումների կայացման մեջ մասնակցության առկա կարծրատիպերի և առկա անհավասարությունների պատճառով, որոնք էլ ավելի լուրջ են միգրանտ և փախստական կանանց համար, անդամ պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ այն միգրանտ և փախստական կանայք, ովքեր իրավունակ են ընտրելու և ընտրվելու տեղական, տարածքային, ազգային կամ եվրոպական ընտրություններում, տեղյակ լինեն իրենց իրավունքների մասին և կարողանան մասնակցել ընտրություններին առանց որևէ խտրականության:
75. Իշխանությունները պետք է խրախուսեն և աջակցեն նախաձեռնություններին, որոնք ուղղված են միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների իրավագործմանը իրենց ընտանիքներում, համայնքներում և ընդհանրապես հասարակության մեջ՝ զարգացնելով նրանց ինքնավստահությունն ու ինքնորոշումը և պաշտպանելով կանանց ու աղջիկներին բացասական սոցիալական վերահսկողությունից: Դա կարող է ներառել մասնակցությունը տեղական, մշակութային կամ կանանց միավորումներին, սպորտային ակումբներին, երիտասարդական ակումբներին և այլ կազմակերպություններին:
76. Միգրանտ և փախստական կանանց և աղջիկներին ուղղված պետական և մասնավոր ուսուցման, մենթորական և այլ աջակցության ծրագրերը պետք է ստեղծվեն և աջակցվեն, մասնավորապես, ինտեգրման դրական օրինակներ և խոստովնալից գործելակերպ խթանելու նպատակով:
77. Միգրանտ և փախստական կանանց և աղջիկների ներդրումը ընդունող համայնքների հասարակության, տնտեսության և մշակույթի մեջ պետք է կարևորվի որպես նրանց ինտեգրմանը և իրավագործմանը նպաստող միջոց:

Կրթություն

78. Իշխանությունները պետք է ապահովեն, որ միգրանտ, փախստական և ապաստան հայցող աղջիկները քաղաքացիներին հավասար պարտադիր կրթություն ստանան և պետք է միջոցներ ձեռնարկեն՝ ներառելու նրանց, ում հնարավոր է արգելված լինի կրթություն ստանալ իրենց ծագման երկրում՝ ապահովելով կրթության կամ ցերեկային խնամքի տրամադրումը հանրակրթական հաստատություններում:
79. Անհրաժեշտության դեպքում միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանայք և աղջիկները պետք է հնարավորություն ունենան շարունակել կրթությունը, ստանալ ցանկացած բարձրագույն կրթություն, ընդգրկվել նախնական և շարունակական մասնագիտական ուսուցման, վերապատրաստման և սոցիալական վերականգնման ծրագրերում, որոնք տրամադրվում են իրավասու ծառայությունների կողմից:
80. Անդամ պետություններին առաջարկվում է քայլեր ձեռնարկել միգրանտ և փախստական կանանց և աղջիկների առկա մասնագիտական և գիտական որակավորումների և գործնականում աշխատանքային փորձի ճանաչմանն ու վավերացմանը նպաստելու համար, ներառյալ՝ այնպիսի նախաձեռնությունների միջոցով, ինչպիսին է Եվրոպայի խորհրդի փախստականների որակավորման եվրոպական անձնագիրը:

81. Ճանաչելով, որ ընդունող երկրի լեզվով հաղորդակցվելու կարողությունը կարևոր է, անդամ պետությունները պետք է ապահովեն միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների համար որակյալ լեզվի ուսուցման և ինտեգրման համար անհրաժեշտ քանակի ժամեր՝ նպաստելու նրանց իրավագործմանը և պաշտպանությանը: Գրագիտության, թվաբանության և թվային հմտությունների դասընթացները նույնպես պետք է կազմակերպվեն ընդունող երկրի ժամանելուց հետո որքան հնարավոր է շուտ:
82. Անկանոն իրավիճակում հայտնված միգրանտների համար 79-րդ, 80-րդ և 81-րդ կետերում նշված ծրագրերին և միջոցառումներին հասանելիությունը ենթակա է իրավունակությունը կարգավորող ներպետական օրենքների պահանջներին:

Զբաղվածություն և տնտեսական գորացում

83. Անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն միգրացիոն գործընթացի վաղ փուլից խտրականությունը կանխելու համար և նպաստեն աշխատանքի մատչելիությանը երկրում օրինականորեն ներկա գտնվող միգրանտ և փախստական կանանց համար:
84. Անդամ պետությունները պետք է կատարեն 1951 թվականի Կոնվենցիայով սահմանված փախստական կանանց և աղջիկների աշխատանքի և ինքնազբաղվածության իրավունքի հետ կապված պարտավորությունները և քննարկեն աշխատանքի խոչընդոտների վերացումը, որոնց հետ բախվում են այլ միգրանտ կանայք և աղջիկները, այն բանից հետո, երբ նրանք որոշակի ժամանակ գտնվել են երկրի տարածքում:
85. Այն միգրանտների, փախստականների և ապաստան հայցող կանանց և աղջիկների առնչությամբ, որոնց անդամ պետությունների ներքին օրենսդրության համաձայն թույլատրվում է աշխատել, վերջիններս պետք է ապահովեն արժանապատիվ աշխատանքային պայմաններ, ներառյալ.
- 85.1 միջոցներ ձեռնարկեն՝ կարգավորելու և բարելավելու նրանց աշխատանքային պայմանները, ինչպես նաև վերացնելու աշխատանքային շահագործման և խտրականության բոլոր ձևերը, ներառյալ՝ բազմակի և ինտերսեկցիոնալ.
- 85.2 աջակցեն նրանց մուտք գործել աշխատաշուկա ինքնազբաղվածության և ձեռներեցության միջոցով՝ նրանց տալով մասնագիտական ուսուցման, շարունակական մասնագիտական զարգացման, միկրովարկավորման ծրագրերի, ստարտափ վարկերի և բիզնեսի զարգացման նույն հնարավորությունները, որոնք հասու են իրենց երկրի աշխատողների համար և աջակցել կամավորության, պրակտիկայի, աշկերտության և աշխատանքի տեղավորման ծրագրերին.
- 85.3 դյուրացնեն մուտքը աշխատաշուկա՝ միջոցներ ձեռնարկելով ապահովելու համար, որ նրանց հասանելի լինեն աշխատանքի և կյանքի ներդաշնակեցման միջոցները, ներառյալ՝ երեխայի խնամքի համար արձակուրդի կազմակերպումը և ճկուն աշխատանքային պայմանները, որտեղ դա հնարավոր է, ազգային աշխատողների հետ հավասար հիմունքներով երեխաների խնամքի հաստատությունների հասանելիություն և դրանց ծառայություններից օգտվելը:
86. Անդամ պետությունները պետք է բավարարեն համապատասխան ազգային և միջազգային չափանիշների պահանջները, որոնք ուղղված են խտրականության, շահագործման և չարաշահումների դեմ՝ միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների պաշտպանությանը:
87. Անդամ պետություններին առաջարկվում է միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց տրամադրել ֆինանսական ծառայություններ և հիմնական ֆինանսական գրագիտության

ուսուցում, որպեսզի նրանք կարողանան օգտագործել խնայողություններն և օգտվեն վարկային ծառայություններից և ավելի լավ վերահսկեն և կառավարեն իրենց եկամուտը՝ դրանով իսկ զորացնելով նրանց:

Կացության թույլտվություններ

88. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանայք և աղքիկները, որոնց կացության թույլտվություն է տրվել ընտանեկան հարաբերությունների հիման վրա, ունենան սոցիալական, տնտեսական և աշխատանքի և նպաստների հետ կապված իրավունքներ՝ ինքնավար կարգավիճակով:
89. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ ապահովելու բռնությունից տուժած միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղքիկներին, որոնց կացության կարգավիճակը կախված է ներքին օրենսդրությամբ ճանաչված ամուսնու կամ զուգընկերոջ կարգավիճակից, ամուսնալուծության կամ հարաբերությունների դադարեցման դեպքում, առանձնապես ծանր հանգամանքների պարագայում, դիմումի հիման վրա տրվի ինքնավար կացության թույլտվություն՝ անկախ ամուսնության կամ հարաբերությունների տևողությունից: Նման ինքնավար կացության թույլտվությունների տրամադրման և տևողության հետ կապված պայմանները սահմանվում են ընդունող երկրի ներպետական օրենսդրությամբ: Միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանայք և աղքիկները պետք է տեղեկացված լինեն այս իրավունքի մասին:
90. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանայք և աղքիկները, որոնք տուժող են դարձել կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ թրաֆիքինգի, ստանան վերականգնվող կացության թույլտվություն, եթե իրավասու մարմինը գտնում է, որ նրանց մնալն անհրաժեշտ է հետաքննության կամ քրեական դատավարության ընթացքում նրանց համագործակցության նպատակով:
91. Կացության թույլտվության տրամադրման ապացույցների չափորոշիչները և շեմը պետք է լինի իրատեսական և հաշվի առնի միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղքիկների անհատական իրավիճակը: Պատասխանատու պետական հաստատությունները պետք է համապատասխան պատրաստվածություն ունենան այդ նպատակով:
92. Անդամ պետությունները պետք է օգնեն հարկադիր ամուսնության նպատակով այլ երկիր բերված կանանց և աղքիկներին, որոնք, որպես հետևանք, կորցրել են իրենց կացության կարգավիճակն այն երկրում, որտեղ նրանք սովորաբար բնակվում են, և վերականգնել այդ կարգավիճակը: Դա պետք է վերաբերի նաև նրանց, ովքեր համապատասխան իրավիճակում կորցրել են իրենց քաղաքացիությունը:
93. Անդամ պետություններին առաջարկվում է անկախ հիմունքներով ապահովելու կացության անվտանգությունը միգրանտ և փախստական կանանց և աղքիկների համար, ովքեր երկար ժամանակ գտնվել են իրենց երկրում, այդ թվում՝ քաղաքացիություն չունեցող կանանց և աղքիկների: Կացության անվտանգությունը պետք է հատկապես ապահովվի կանանց նկատմամբ բռնության տուժողների համար, որոնց երեխաները ընդունող երկրի քաղաքացիներ են, մասնավորապես, երբ բաժանման/ընտանեկան իրավունքի դատավարության ընթացքում նրանք կորցնում են իրենց երեխաներին խնամելու հնարավորությունը:
94. Անդամ պետություններին առաջարկվում է տրամադրել հպատակագրման ուղիներ և միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար, որ միգրանտ և փախստական կանայք և աղքիկները այս հարցում գեղերի հիմքով խոչընդոտներ չունենան:

Ընտանիքի վերամիավորում

95. Ընդունելով, որ ընտանիքի վերամիավորումը միգրանտ և փախստական կանանց և աղքիկների

համար կարող է լինել ինչպես անվտանգության ապահով ճանապարհ, այնպես էլ պաշտպանող գործոն ընդունող երկրում, անդամ պետությունները պետք է ապահովեն միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների համար ընտանեկան վերամիավորման իրավունքը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով և համապատասխան միջազգային իրավունքով նախատեսված պարտավորություններին համապատասխան: Այդ առումով անդամ պետությունները պետք է.

- 95.1 ապահովեն, որ կանայք և աղջիկները տեղեկացված լինեն ընտանիքի վերամիավորման հետ կապված իրենց իրավունքների մասին և այդ իրավունքներն իրականացնելու համար կարողանան օգտվել իրավաբանական խորհրդատվությունից և աջակցությունից.
- 95.2 քննարկեն ապաստանի դիմումն ընդունելու կամ փոխանցելու նպատակահարմարությունը, հնարավորություն ընձեռելով իրենց ճանապարհորդությունների ընթացքում միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների՝ բաժանված ընտանիքների վերամիավորման համար.
- 95.3 իրենց ներքին օրենքների շրջանակներում ապահովեն իրավական ուղիներ՝ հարգելու իրենց տարածքում օրինական կերպով բնակվող միգրանտ կանանց և աղջիկների ընտանեկան կյանքը, մասնավորապես՝ ընտանիքի անմիջական և կախյալ անդամներին հնարավորություն տալով գաղթել նրանց հետ կամ միանալ նրանց հյուրընկալող երկրում.

Կախնք

96. Ազատությունից զրկելու բոլոր ձևերի առնչությամբ անդամ պետությունները պետք է որդեգրեն անձի տարիքը հաշվի առնող և գենդերազգայուն մոտեցում, որը հաշվի կառնի միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների անհատական իրավիճակը և անձնական բնութագիրը: Անդամ պետությունները ազատությունից զրկված միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկներին պետք է նաև տրամադրեն հետևյալ ծառայությունները.

- 96.1 սույն հավելվածի 14-րդ կետի համաձայն՝ իրենց իրավունքների և, անհրաժեշտության դեպքում, իրավաբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության մասին տեղեկատվության հասանելիություն.
- 96.2 իրավակիրառման միջոցների, հաղորդումների և գանգատների ներկայացման արդյունավետ մեխանիզմների հասանելիություն, ներառյալ՝ իրավապահ մարմինների կողմից այդ գանգատների ուղղորդումը և հետաքննությունը և, անհրաժեշտության դեպքում, իրավաբանական օգնության հասանելիության ապահովումը.
- 96.3 առողջապահական ծառայությունների, հեռախոսային օգնության գծերի և հոգեկան տրավմայի աջակցության և խորհրդատվական հաստատությունների հասանելիություն.
- 96.4 կին անձնակազմի առկայություն սահմանային, միգրացիոն և այլ ոստիկանության կամ խնամառության հարցերով պաշտոնյաների, ինչպես նաև սոցիալական աշխատողների և հնարավորության դեպքում թարգմանիչների կազմում.
- 96.5 հեռախոսային և/կամ ինտերնետ կապի հասանելիություն՝ հարազատին կամ մեկ այլ կողմին ազատությունից զրկելու մասին տեղեկացնելու համար, ինչպես նաև հյուպատոսական օգնության հասանելիություն.
- 96.6 արտաքին աշխարհի հետ բովանդակալից կապի մեջ մնալու հնարավորություն, ներառյալ՝ այցելությունները, կանոնավոր ձևով հեռախոսակապից կամ իրենց բջջային հեռախոսներից կամ ինտերնետային կապից օգտվելու հնարավորություն:

97. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ազատությունից զրկման վայրերը, ներառյալ՝

վարչական կալանավայրերը, ենթարկվեն կանոնավոր անկախ մշտադիտարկման:

98. Այն դեպքում, երբ ներգաղթային օրենսդրության համաձայն կիրառվում է վարչական կալանք, որը պետք է լինի միայն ծայրահեղ միջոցը, ընտանիքները չպետք է բաժանվեն, և կանանց և աղջիկների համար կալանավայրերում պետք է ապահովվեն առանձին անվտանգ գոտիներ, որտեղ նրանց գաղտնիությունը երաշխավորված է և իրենց հատուկ կարիքները պատշաճ ձևով բավարարվում են: Առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված աղջիկները, որպես ընդհանուր կանոն, չպետք է կալանավորվեն:
99. Ցանկացած դեպքում միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկներին, որոնք ենթարկվել են խոշտանգումների կամ բռնության, ներառյալ՝ թրաֆիքինգի, հոլի և կերակրող կանանց, տարեց կանանց և հաշմանդամություն ունեցող կանանց պետք է տրամադրվեն վարչական կալանքի արդյունավետ այլընտրանքներ:
100. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ներգաղթի կալանավայրերում ապրելու պայմաններն արտացոլեն առնվազն սույն հավելվածի 46-52-րդ պարբերություններում (Տարանցման և ընդունման կենտրոններ) թվարկված պայմանները:
101. Ցանկալի է, որ վարչական կալանքի տակ գտնվող միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանայք և աղջիկները տեղավորվեն հատուկ՝ այդ նպատակով նախատեսված կենտրոններում: Պետք է զգույշ լինել տարածքների նախագծման և կահավորման հարցում՝ հնարավորինս խուսափելու բանտային միջավայրի որևէ տպավորությունից: Կալանավայրում միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկների ազատ տեղաշարժը պետք է հնարավորինս քիչ սահմանափակվի:
102. Վարչական կալանքի տակ գտնվող միգրանտ, փախստական և ապաստան հայցող կանանց և աղջիկներին պետք է առաջարկվեն գործունեության համապատասխան տեսակներ, և նրանք, սկզբունքորեն, պետք է ողջ օրվա ընթացքում բացօթյա վարժությունների ազատ մուտք ունենան:

VI. Վերադարձ

103. Կամավոր վերադարձը պետք է լինի նախընտրելի տարբերակը: Վերադարձը միշտ պետք է իրականացվի ապահով և արժանապատվորեն՝ *non-refoulement* (չվտարել փախստականին կամ ապաստան հայցողին այն երկիր կամ տարածք, որտեղ նա կարող է հետապնդման ենթարկվել) սկզբունքին համապատասխան: Անդամ պետությունները, հետևաբար, պետք է ապահովեն, որ միգրանտ և ապաստան հայցող կանայք և աղջիկները չվերադարձվեն կամ չհեռացվեն մի երկիր, որտեղ նրանց կյանքը վտանգված է կամ որտեղ նրանք կարող են ենթարկվել խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, այդ թվում՝ այնպիսի գործողությունների, որոնք անհամաչափորեն ազդում են կանանց և աղջիկների վրա կամ ուղղված են նրանց, քանի որ նրանք կին կամ աղջիկ են:
104. Վերադարձի հետ կապված՝ պատշաճ ուշադրություն պետք է դարձնել մարդու իրավունքների համապատասխան պարտավորություններին, մասնավորապես՝ միջազգային իրավունքին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկային համապատասխան ընտանեկան կյանքի իրավունքին, և անձի խոցելի իրավիճակին, մասնավորապես՝ կապված նրա առողջական վիճակի հետ, ներառյալ՝ օրինակ, հոլիությունը: Աղջիկների վերադարձի հետ կապված՝ առաջնային ուշադրությունը պետք է տրվի երեխայի լավագույն շահերին:
105. Ճանաչելով հատուկ դժվարությունները, որոնց բախվում են կանանց նկատմամբ բռնության, ներառյալ՝ թրաֆիքինգի տուժողները՝ իրենց միջազգային պաշտպանության պահանջի հիմքերը լիովին բացահայտելու հարցում, անդամ պետությունները պետք է գործադրեն անվտանգ, գաղտնի և զոհակենտրոն գործընթացներ՝ նվազագույնի հասցնելու *refoulement*-ի ռիսկը:
106. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ մինչև միջազգային պաշտպանության կարիքների անհատական գնահատման ավարտը չկիրառվեն արագացված և չկասեցվող ընթացակարգեր,

հատկապես, եթե կան կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ թրաֆիքինգի նշաններ:

107. Անդամ պետությունները պետք է նախատեսեն միգրանտ կանանց վտարման միջոցների կասեցման հնարավորությունը՝ ելնելով իրենց ամուսնուց, ներպետական օրենսդրությամբ ճանաչված զուգընկերոջից, ծնողից կամ ընտանիքի այլ անդամից կախված կարգավիճակից, որպեսզի նրանք կարողանան դիմել անկախ կացության թույլտվություն ստանալու համար:
108. Այն դեպքերում, երբ համապատասխան մարմիններն անհրաժեշտ են համարում, վերադարձը պետք է ուղեկցվի վերադարձի անդամ պետություններում կայուն վերաինտեգրման և աջակցության միջոցներով: Վերադարձի անդամ պետությունները, մասնավորապես, պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ձեռք բերված ցանկացած դիպլոմների կամ որակավորումների ճանաչումը թույլ տալու համար: